ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ -17/20» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատող հանձնաժողովի նիստի
(Տպագիր նյութեր և հարակից արտադրանք)

ք. Երևան 30 նոյեմբերի 2017թ. Ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Թ. Զաքարյան, Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան, Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Պետրոսյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Փոփոխություններ կատարել գնահատող հանձնաժողովի նոյեմբերի 24-ի N 2 Արձանագրության մեջ:
3. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Փոփոխություններ կատարել գնահատող հանձնաժողովի նոյեմբերի 24-ի N 2 Արձանագրության մեջ:

2.1 Գնահատող հանձնաժողովի նոյեմբերի 24-ի N 2 Արձանագրության մեջ 6-րդ կետով ներկայացված յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին աղյուսակում N 2 (Ամանորյա բացիկներ) և N 3 (Ամանորյա բացիկներ /անվանական/) չափաբաժինների մասով տեղի է ունեցել անճշտություն: Մասնավորապես գնման առարկաների նախահաշվային արժեքները N 2 չափաբաժնի մասով 6400 /վեց հազար չորս հարյուր/ դրամի փոխարեն պետք է լինի 24050 /քսանչորս հազար հիսուն/ դրամ, իսկ N 3 չափաբաժնի մասով 24050 /քսանչորս հազար հիսուն/ դրամի փոխարեն՝ 6400 /վեց հազար չորս հարյուր/ դրամ: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում N 2 Արձանագրության 7-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

4. N 4 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Միսմա» ՍՊԸ մասնակցին՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները N 2 և N 3 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցին որոշելու նպատակով ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված «Միսմա» ՍՊԸ մասնակցին հրավիրել առաջարկված գների նվազեցման շուրջ բանակցությունների:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Հաստատել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման հետևյալ ժամանակացույցը.

3.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը կայանալու է «Միսմա» ՍՊԸ մասնակցին առաջարկված գների նվազեցման շուրջ բանակցությունների մասնակցելու ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 2-րդ աշխատանքային օրը՝ դեկտեմբերի 5-ին, ժամը՝ 12:00-ին, ք. Երևան, Կ. Ուլնեցու 68 հասցեում, Ֆինանսատնտեսագիտական և գնումների համակարգման բաժնում:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	_____	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	_____	Թ. Զաքարյան
	_____	Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	_____	Ա. Իսկանդարյան
	_____	Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	_____	Ա. Պետրոսյան